

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԵԼ ԱՌԱՋԵԼՅԱՆ

«Օրինաց երկիր» կուսակցության երիտասարդական միության նախագահ, «Հայաստանում ֆրանսիական քոլեց» հիմնադրամի տնօրենի

Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի եվրոպական և դատավարական իրավագիտության ամբիոնի 3-րդ կուրսի ասպիրանտ



ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՏԵՂԾՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Յուրաքանչյուր երկրում արդարադատության իրականացման արդյունավետությունը առաջին հերթին կախված է նրանից, թե ում կողմից է այն իրականացվում: Խոսքը, իհարկե, վերաբերվում է առաջին հերթին դատավորներին, որոնք պատասխանատվություն են կրում օբյեկտիվ արդարադատության իրականացման համար: Սակայն այստեղ կարևոր է հասկանալ, թե ինչպես են վերջիններս ստանձնում այդ պարտականությունը, և ով է նշանակում այդ անձանց:

ՀՀ-ում դատավիրավական բարեփոխումների իրականացման առաջին փուլում կարևորվեց ժողովրդավարական, իրավական համակարգ ունեցող երկրների փորձի ընդորինակմամբ: Հիմնականում դատական իշխանության ներկայացուցիչներից կազմված ինքնակառավարվող մարմնի ստեղծումը, որը դատավորների նշանակման, նրանց կարգապահական պատասխանատվության ենթարկելու առումով պետք է հանդես գար որպես անկողմնակալ, արդարացի և բականցիկ պետական մարմին՝ հանձննա արդարադատության խորհրդի: Վերջինիս՝ որպես դատական իշխանության կենտրոնական մարմնի վերաբերյալ դրույթներն իրենց ամրագրումն են ստացել Հայաստանի Հանրապետության 1995 թվականի հուլիսի 05-ին ընդունված սահմանադրությունում: Այն իր բնույթով սահմանադրական մարմին է:

Արդարադատության խորհրդի ստեղծման մասին խոսելիս, կարծում ենք, նախ և առաջ անհրաժեշտ է նշել այն քաղաքական և իրավական դրույթունը, որի պայմաններում ստեղծվեց ՀՀ արդարադատության խորհուրդը, քանզի նրա ստեղծմանը գուգընթաց ՀՀ-ում տեղի է են ունենում քաղաքական և իրավական բնույթի լուրջ գործընթացները: Այնուհետև համեմատության կարգով կներկայացնեմ Ֆրանսիայի Հանրապետությունում արդարադատության խորհրդին համարժեք մարմնի՝ Մագիստրատուրայի բարձրագույն խորհրդի ստեղծ-

ման ժամանակագրական տվյալները՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ այս մարմինը որպես այդպիսին առաջացել է հենց Ֆրանսիայում: Վերջում կներկայացնեմ իմ առաջարկություններն ու մոտեցումները այս մարմնի ընդհանուր գործունեության վերաբերյալ:

Եվ այսպես, խոսելով ՀՀ երրորդ հանրապետության քաղաքական իրավիճակի մասին, պետք է նշել, որ թիվ մեկ քաղաքական իրադարձությունը կազմված էր Խորհրդային միության վիլուգման հետ, երբ խորհրդային պետությունները, այդ թվում Հայաստանը, ձեռք բերեցին անկախություն և ձեռնամուխ եղան սեփական պետության կառուցման գործին: Պետության արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ էր ստեղծել իրավական այնպիսի համակարգ, այսինքն՝ համընդիանուր վարքագծի այնպիսի կանոններ, որոնք կօգնեն նորանկախ պետությանը իրավականացնել իր առջև դրված խնդիրները և կապահովեին մարդու և քաղաքացու իիմնարար իրավունքներն ու ազատությունները: Եվ այս առումով ՀՀ երրորդ հանրապետության ծանր քաղաքական, տնտեսական, ընկերային կացությունը, պատերազմները, հանցավորության մեծ ծավալը, միասնական դատական համակարգի անարդյունավետ գործունեությունը էլ ավելի էին բարդացնում իրավականացվող բարեփոխումների արդյունավետ իրականացումը:

Բացի դրանից՝ 1991 թվականին Հայաստանը գտնվում էր անկախ պետության կերտման ճանապարհին: Հայ ժողովուրդը շուրջ երկու տարվա փորձություններով լի ծանր պայքարում չկորցրեց իր ողջամտությունը և լուրս չեկավ պայքարի սահմանադրական շրջանակներից: Հայ ժողովուրդը համախմբվեց, դարձավ միասնական՝ լի սեփական բախտը կռելու վճռականությամբ: 1991 թվականի սեպտեմբերի 23-ին Հայաստանի Հանրապետության գերազույն խորհրդային Հայաստանը հոչակեց անկախ պետություն: Դրանից հետո անհրաժեշ-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

տուրյուն էր առաջացել ձևավորել պետական դատական համակարգ։ Դատական համակարգը հանդես էր գալու ոչ թե միայն որպես մարդու իրավունքների պաշտպանության միջոց, այլ նաև երկրում իրավակարգի ապահովման և ամրապնդման լրացուցիչ երաշխափր։ Այբբեշանի տարածքով եկող գազամուղի փակումը, էներգետիկ շրջափակումը, հանրապետության գրեթե բոլոր ձեռնարկությունների գործունեության դադարեցումը, բնակչության գրկումը ջեռուցումից, երկարուղու փակումը երկրի տնտեսությունը կանգնեցրեցին կազմալուծման լուրջ սպառնալիքի առջև։ Ստեղծված ծանր քաղաքական, տնտեսական, սոցիալական կացությունը, հանցավորության բարձր մակարդակը, միասնական դատական համակարգի և իրավապահպան համակարգի ոչ արդյունավետ գործունեությունը, կուսակցական պայքարի անհաշտելիությունը, ինչ խոսք, փոխանցվում էր պետական մարմիններին՝ բացասական ազդեցություն թողնելով ողջ պետական կառուցակարգի, այդ թվում և դատական իշխանության մարմինների գործունեության վրա։

Ինչ վերաբերում է ՀՀ արդարադատության խորհրդի ստեղծման ժամանակահատվածում երկրում առկա իրավական դրույթանը, ապա անհրաժեշտ է նշել, որ 1990 թվականի օգոստոսի 23-ին ՀՀ Գերագույն խորհուրդն ընդունեց Հայաստանի Հանրապետության Անկախության հոչակագիրը, որն ամրագրեց պետության և անհատի փոխհարաբերության նոր մոդել, ճանաչեց իրավական, ժողովրդավարական պետության կառուցման անհրաժեշտությունը, պետություն, որի կազմակերպման հիմնական սկզբունքը պիտի լիներ իշխանությունների տարածատումը։ Չնայած դրան՝ դատական բարեփոխումների իրականացման ուղղությամբ իրադրությունը մնաց անփոփոխ, քանի որ ԽՍՀՄ փլուզումից և անկախության ձեռքբերումից հետո Հայաստանը հայտնվեց շատ բարդ արտաքին քաղաքական կացության մեջ, որը հանգեցրեց հանրապետության տնտեսական շրջափակմանը և չհայտարարված պատերազմին Ղարաբաղու։ Ստեղծված իրավիճակն անհնարին դարձեց դատադիրավական բարեփոխումների անցկացումը։ Բացի այդ՝ սպասվում էր սահմանադրական-իրավական բարեփոխումների իրականացում։ Այսպիսվ խոսքը գտնում էր ոչ միայն և ոչ այնքան դատադիրավական բարեփոխումների, որքան կոմունիտական գաղափարականացված իրավագիտության փոխարեն իրավագիտության և իրավական կարգավորման նոր հայեցակարգ մշակելու մասին։ Արձատական բարեփոխումների այդ ճանապարհին հայ ժողովուրդը 1995 թվականի հուլիսի 5-ին հանրաքվեի միջոցով լուրունեց նոր սահմանադրու-

թյուն, որը Հայաստանի Հանրապետությունը հռչակում էր ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական և իրավական պետություն, որի կառուցման և գործունեության հիմնական սկզբունքը համարվում էր օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների տարածատումը։ Հայաստանի Հանրապետության սահմանադրությունը ստեղծվեց՝ նկատի ունենալով սահմանադրական շինարարության և ժողովրդավարության ուղին որդեգրած շատ երկրների կուտակած լավագույն փորձը։

Դրանից հետո ՀՀ Գերագույն խորհրդի կողմից 1995-ի նոյեմբերի 14-ին ընդունվեց «Արդարադատության խորհրդի մասին» ՀՀ օրենքը։ Խոկ 1996 թվականի նոյեմբերի 8-ին հրապարակվեց ՀՀ Նախագահի հրամանագիրը ՀՀ դատադիրավական բարեփոխումների մասին, որից հետո 1998 թվականի ընթացքում ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվեցին «Դատարանակազմության մասին», «Դատավարի կարգավիճակի մասին», «Դատախազության մասին», «Դատական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքները։

Այսպիսվ նոր օրենսդրությանը համապատասխան ձևավորվեց և սկսեց գործել ՀՀ նոր դատական համակարգը և ՀՀ արդարադատության խորհուրդը։ Հայաստանի երրորդ հանրապետության սահմանադրության 5-րդ հոդվածն ամրագրեց իշխանությունների տարածատման, դատարանի անկախության և արդարադատության այլ ժողովրդավարական սկզբունքներ, սակայն այս կամ այն սկզբունքն իրավաբանորեն ձևակերպելով դեռևս չի նշանակում, թե այն գործնականորեն արդեն իրացվել կամ իրացվում է կյանքում։ Հայտապատճեն կատարված դատական բարեփոխումների արդյունքում հանրապետությունում ստեղծված դատական իշխանությունը, դատական անկատար համակարգը, սխալներ, թերություններ ու բացքողումներ պարունակող նյութական և դատավարական օրենսդրությունները և դրանցով սահմանված իրավունքների պաշտպանության կառուցակարգերն ու ընթացակարգերը կատարելագործման խիստ կարիք էին գում։

Այնուհետև 2005 թվականի նոյեմբերի 27-ի սահմանադրական փոփոխություններով դրվեցին Հայաստանում դատադիրավական բարեփոխումների երկրորդ փուլի հիմնաքարերը։ Դատական իշխանության և, մասնավորապես, ՀՀ արդարադատության խորհրդին վերաբերվող դրույթները ենթարկվեցին լուրջ փոփոխությունների։ Վերջիններս իրենց օրենսդրական ամրագրումն են ստացել դատադիրավական բարեփոխումների երկրորդ փուլի կարևորագույն նորմատիվ փաստաթուրը հանդիսացող ՀՀ դատական օրենսդրում, որի ուժի մեջ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

մտնելու պահից ուժը կորցրած են ճանաչվել «Դատարանակազմության մասին», «Արդարադատության խորհրդի մասին» և «Դատավորի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքները:

Օրենսդրական փոփոխությունների արդյունքում նպատակ էր դրված վերացնելու այն թերություններն ու բացքողումները, որոնք առկա էին: Իրականացված բարեփոխումներից անմասն չնաց նաև ՀՀ արդարադատության խորհուրդը: Այս առումով Գ. Հարությունյանը նշում է, որ սկզբնական շրջանում թույլ տրվեցին մի շարք սխալներ. նախ՝ արդարադատության խորհրդի կազմում ընդգրկվեցին նաև ՀՀ գլխավոր դատախազը՝ որպես խորհրդի փոխնախագահ, և նրա առաջադրմամբ՝ երեք դատախազներ, երկրորդ՝ խորհրդի կազմավորմանը մասնակից շրաբձվեց օրենսդրի մարմինը՝ ՀՀ Ազգային ժողովը, երրորդ՝ դատական մարմինների անկախության երաշխավոր հոչակված հանրապետության նախագահը գլխավորեց արդարադատության խորհուրդը: Վերը հիշատակված թերությունների և բացքողումների կապակցությամբ Գ. Հարությունյանը նշում է, որ՝ ա) դատախազությունը սահմանադրության 103-րդ հոդվածին համապատասխան օժտված էր և օժտված է պետական գործունեության ինքնուրույն տեսակով, այսինքն՝ արդարադատության հետ կապ չունեցող իրավասություններով (քրեական հետապնդում, մեղադրանքի պաշտպանություն և այլն), և նրա ներկայությունները կարող էին այդ խորհրդում հանդես գալ դատախազությանն անհնազանդ դատավորների ճնշմամբ, բ) իշխանության մյուս ճյուղ՝ օրենսդիրը, զերծ պահվեց դատական իշխանության ծևավորման և նրա աշխատանքում մասնակցություն ունենալու, հետևաբար և իշխանության գործադիր թիվն արդարադատության խորհրդում հակաշռելու հնարավորությունից, մինչդեռ արդարադատության նախարարը (գործադիր իշխանության ներկայացնությանը փոխանակացիությանը) խորհրդի փոխնախագահն էր, զ) ՀՀ Նախագահի կողմից արդարադատության խորհուրդը գլխավորելը նույնպես իրավաչափ չէ, քանի որ նա սահմանադրական իր բազմաթիվ լիազորություններին համապատասխան այն ժամանակ, փաստորեն, գործադիր իշխանության դեկավարն էր, ի տարրերություն այլ երկրների նախագահների, հրավիրում և վարում էր կառավարության նիստերը, վավերացնում էր կառավարության որոշումները և այլն, իր դեկավարած արդարադատության խորհրդի առաջադրմամբ ինքն էլ նշանակում էր բոլոր առյանների դատավորներին, և փաստորեն դատական իշխանությունն ամբողջությամբ կենտրոնանում էր նրա ձեռքում, որը չէր կարող նպաստել զապունների և հակաշռների (իշխանությունների հավասարակշռման) սկզբունքի իրա-

կանացմանը⁵: Այս տեսանկյունից լիովին կիսում եմ վերոնշյալ տեսակետը, քանզի անհրաժեշտ էր ապահովել իշխանությունների հավասարակշռման սկզբունքի իրականացումը, իսկ այդ ժամանակ գործող արդարադատության խորհրդի կազմավորման կարգը այդ հնարավորությունը չէր տալիս: Իսկ ինչ վերաբերում է ՀՀ արդարադատության խորհրդում դատախազության ներկայացնությանը՝ ներկայացված լինելուն, ապա պետք է նշեմ, որ նույնիսկ եվրոպական մի շարք երկրներում մագիստրատների (դատավորների և դատախազներին) դիմերսիֆիկացիան կատարվել էր դեռևս շատ վաղուց:

Պատահական չէ այն փաստը, որ Մագիստրատուրայի բարձրագույն խորհուրդը առաջացել և իր հիմնական զարգացումն է ունեցել Ֆրանսիայում: Այն սկզբում կոչվել է դատական բարձրագույն իշխանության խորհուրդ (Conseil de la Haute-Autorité judiciaire): Հատկանշական է, որ դեռևս 1810 թվականին Նապոլեոն 1-ինի օրոք Ֆրանսիայում օրենսդրության ամրագրվեց դատավորների նշանակովիրությունը նրանց ընտրովիրության փոխարեն՝ Ֆրանսիայում այս մարմնի մասին առաջին անգամ հիշատակվել է 1883 թվականի օգոստոսի 31-ին ուժի մեջ մտած դատարանակազմությանը վերաբերող բարեփոխումների մասին օրենքով: Սակայն այս մարմնի վերաբերյալ սահմանադրության մեջ դրույթներ սահմանվեցին միայն 1946 թվականին՝ Ֆրանսիայի չորրորդ հանրապետության օրոք: Այն հոչակվեց որպես անկախ սահմանադրական մարմնի: Համաձայն 1946 թվականի հոկտեմբերի 27-ի սահմանադրության 84-րդ հոդվածի՝ խորհուրդը իրականացնում էր երկու կարևոր գործադրությունը: 1-ինը դատավորների նշանակման համար հանրապետության նախագահին էր ներկայացնում դատավորների թեկնածուներին, և 2-րդը լուծում էր նրանց կարգավահական պատասխանատվության ենթարկելու հարցերը:

Դրանից հետո՝ 1958 թվականի հոկտեմբերի 4-ին, ընդունված սահմանադրական բարեփոխումների արդյունքում փոխվեց Մագիստրատուրայի բարձրագույն խորհրդի կազմավորման կարգը: Ի տարրերություն 1946 թվականի սահմանադրությամբ նախատեսված կարգի, որի ժամանակ խորհրդի ձևավորման գործում իրենց ակտիվ դերակատարությունն ունեին Ֆրանսիայի Ազգային ժողովը և մագիստրատների ընդհանուր ժողովը, 1958 թվականի սահմանադրությամբ նախատեսվեց խորհրդի ձևավորման հետևյալ կարգը: Խորհրդի բոլոր անդամները նշանակվում էին հանրապետության նախագահի կողմից⁷:

Սակայն ժամանակի հետ անհրաժեշտու-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

թյուն առաջացավ վերանայել և էլ ավելի ուժեղացնել այս մարմնի իրավական կարգավիճակը: Այդ ամենը կատարվեց 1993 թվականի հունիսի 27-ին ընդունած սահմանադրական օրենքով և 1994 թվականի փետրվարի 05-ին ընդունած Մագիստրատուրայի բարձրագույն խորհրդի նախն մայր օրենքով (loi organique):

Վերջին տարիներին Ֆրանսիայում իրականացվեցին դատաիրավական լուրջ բարեփոխումներ, որոնցից անմասն չմնաց նաև մագիստրատուրայի բարձրագույն խորհուրդը: Նույնին Ֆրանսիայի Հանրապետության նախկին նախագահ Նիկոլա Սարկոզին 2009 թվականի ապրիլի 21-ին հայտարարեց, որ առաջարկված սահմանադրական բարեփոխումների նախագիծը երկու հիմնական փոփոխություն է ներառում. 1-ինը կայանում է նրանում, որ դատավարությանը մասնակցող անձինք հնարավորություն են ստանում անձամբ դիմել մագիստրատուրայի բարձրագույն խորհուրդ, եթե գտնում են, որ մագիստրատուրի գործողությունների արդյունքում իրենց վճառ է հասցել կամ խախտվել են իրենց իրավունքները: Եվ 2-րդը վերաբերում է մագիստրատուրայի բարձրագույն խորհրդի կազմավորման կարգին: Այսուհետև խորհուրդը կազմված չի լինի բացառապես մագիստրատուրից: Արտաքին անձինք (personnalité extérieure-փաստաբաններ, իրավունքի մասնագետներ, նախկին բարձրաստիճան պաշտոնյաներ, պետական խորհրդականներ) խորհրդում կկազմեն մեծամասնություն⁸: Այս փոփոխության մասին նույնիսկ «Ֆիզարո» օրաթերթում տպագրվեց մի հոդված հետևյալ վերտառությամբ՝ Մագիստրատուրայի բարձրագույն խորհրդում մագիստրատուրը փոքրամասնություն են կազմում: Արդյունքում Մագիստրատուրայի բարձրագույն խորհրդի յուրաքանչյուր կառուցվածքային մասում ընդգրկվելու են օրենքով սահմանված կարգով ընտրված 6 մագիստրատուր, ինչպես նաև պետական խորհրդի մեկ անդամ և համալսարանական պրոֆեսոր: Խորհրդի մնացած 6 անձինք նշանակվելու են համապատասխանաբար հանրապետության նախագահի, Ազգային ժողովի և Սենատի կողմից⁹:

Ամփոփելով՝ կարելի է վստահաբար ասել, որ ՀՀ արդարադատության խորհուրդը ստեղծվեց քաղաքական և իրավակիրառ շատ բարդ պայմաններում, ինչը չի կարող նպաստել խորհրդի գործունեության արդյունավետությանը: Ինչ խոր, այսօր այս մարմինը ՀՀ դատական իշխանության անկախության ապահովման լրացուցիչ երաշխավորն է, որն իրականացնում է երեք հիմնական գործույթ՝ դատավորների նշանակում, կարգապահական պատասխանատվության ենթարկել և խորհր-

դատվական գործառույթների իրականացում: Իմ կարծիքով այս մարմինը չպետք է հանդիսանա պետական (դատական) իշխանության տարրեր թեր ներկայացնող պետական մարմինների պայքարի բարերաբեմ, այլ այն պետք է լինի դատական իշխանությունում քաղաքականություն մշակող և իրականացնող կոլեգիալ մարմին, որը ունակ կլինի բարձրացնել դատավորների պրոֆեսիոնալիզմը, ապահովել դատական իշխանության անկախությունը և արդարադատության արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ բոլոր պայմանները:

Ակնհայտ է, որ այսօր մեր երկրում իրականացվում են բազմաբնույթ և լայնածավալ բարեփոխումներ: Դրանք իրականացվում են հիմնականում եվրոպական կառույցների հետ համագործակցության արդյունքում: Բարեփոխումները ընդգրկում են հարկային, մաքսային, ոստիկանության, դատաիրավական համակարգերը, որոնք պայմանավորված են ՀՀ պետական-իրավական համակարգի կատարելագործման խնդիրներով, ինչպես նաև դատական և իրավապահպան մարմինների կազմակերպման և գործունեության հայեցակարգի արդիականացմամբ: Վերջինս նշանակում է, որ մեր երկիրն աստիճանաբար անցնում է Եվրոպական միության չափորոշիչներին և օրենսդրության մուտքարկմանը (օրենսդրության ռեցեպցիա):

Այս առումով կարևոր է արդարադատության խորհրդի վերաբերյալ զարգացած եվրոպական երկրների կուտակած փորձի, առկա մոտեցումների և իրավական զարգացումների ուսումնակիրությունը, ինչը կնպաստի այս մարմնի գործունեության արդյունավետության բարձրացմանն ուղղված կոնկրետ առաջարկությունների ներկայացմանը և վերջինիս համապատասխանեցմանը եվրոպական օրենսդրության պահանջներին:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

¹Տե՛ս 1995թ հուլիսի 5-ի ՀՀ Սահմանադրության տեքստի 94-րդ և 95-րդ հոդվածները

²Տե՛ս Վարդարյան Ա., Հայաստանի առաջին Հանրապետության դատական համակարգը (1918-1920թթ.): Իրավաբանական գիտությունների թեկնածուի ատենախոսության սեղմագիր, Երևան, 1996թ., էջ 18-19

³Այդ մասին մանրամասն տե՛ս Խաչատրյան Հ.Մ., Հայաստանի Հանրապետության առաջին սահմանադրությունը, Երևան, 1998

⁴Տե՛ս Ղազինյան Գ., Օհանյան Լ. և ուրիշներ, Դատական իշխանության հայեցակետը Հայաստանի Հանրապետության սահմանադրական փոփոխությունների գործընթացում («Իրավագիտության հարցեր» միջրութական ժողովածու, 2000, 3-4, 5-14 էջեր)

⁵Տե՛ս Հարությունյան Գ., ՀՀ սահմանադրության մեկնաբանություններ, Երևան, 2010, էջ 933

⁶Տե՛ս Բաղրամյան Ա.Վ., Երիցյան Ա.Հ., Մարդու իրավունքները և դրանց պաշտպանության մեխանիզմները դատական և իրավապահ մարմինների համակարգում (պետության և պրակտիկայի հիմնահարցեր), Երևան, Միսիքար Գոշ, 2000, էջ 294

⁷Տե՛ս Thierry S.RENOUX, Les conseils supérieurs de la magistrature en Europe, La documentation française, Paris, 1999, p.204

⁸Տե՛ս Le Figaro <http://www.lefigaro.fr/> (édition datée du 22/04/2009)

⁹Տե՛ս Le Figaro <http://www.lefigaro.fr/> (édition datée du 21/03/2008)

РЕЗЮМЕ

О создании Совета Правосудия в Республике Армения

Научная статья “О создании Совета Правосудия в Республике Армения” посвящена той политической и правовой ситуации, тем условиям, при которых был создан Совет Правосудия РА. Также были рассмотрены те предпосылки, которые послужили основой для создания Совета Правосудия РА - ими являются Основы Конституции и Права.

Путем сравнения, автор предоставляет эквивалентный нашему Совету Правосудия орган в Республике Франция - это Высший Совет Магистратуры, рассматривает его характерные особенности в процессе формирования.

SUMMARY

The Foundation of the Council of Justice in the Republic of Armenia

The scientific article “The Foundation of the Council of Justice in the Republic of Armenia” is dedicated to that political and juridical situation of Armenia, in which conditions of the Council of Justice was founded. Here are also discussed constitutional and juridical basis on which the Council is built. The author has also drawn parallels with the Council of Justice of the Republic of France analyzing the chronological facts for the foundation of the Council and its characteristic features.